Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ,
CIVIL DEFENSE, ГРАЖДАНСКАЯ ОБОРОНА

Կարինե Մանասյան. Առաջնային սիրտ-թոքային վերակենդանացման վերաբերյալ ժամանակակից մեթոդական հանձնարարականները արտահոսպիտալային սրտի կանգի դեպքում.....246
Karine Manasyan. Contemporary Guidance for Basic Cardiopulmonary Resuscitation during Out- of-Hospital Cardiac Arrest
Карине Манасян. Современные методические рекомендации по проведению базовой сердечно-легочной реанимации при внегоспитальной остановке сердца

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԱՄԲԻՈՆ
TRIBUNE OF YOUNG RESEARCHER
ТРИБУНА МОЛОДОГО ИССЛЕДОВАТЕЛЯ

Մարիամ Թոփակյան. Ֆրանսիայի Հանրապետության դիրքորոշումը և քաղաքականությունը Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ.....259
Mariam Topakyan. The Position and the Policy of the French Republic in Nagorno-Karabakh Conflict
Мариам Топакян. Позиция и политика Французской Республики в Нагорно-Карабахском конфликте

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջազգային առցանց գիտաժողով՝ նվիրված Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին.....273

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում անցկացվեց «Սևրի դաշնագիրը և հայկական հարցը» գիտաժողովը.....280

«Գիտական Արցախ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները.....282

The Requirements for «Scientific Artsakh» Journal.....283

Требования к оформлению статей для журнала «Научный Арцах».....285

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՇՈՒՇԻԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի և «Մշակույթ և ապագա» հիմնադրամի համատեղ նախաձեռնությամբ հուլիսի 15-16-ը տեղի ունեցավ միջազգային առցանց գիտաժողով՝ **«Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն»** խորագրով՝ նվիրված **Շուշիի հայ բնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցին:** Գիտաժողովի գործընկերներն էին Արցախի գիտական կենտրոնը, «Խաչմերուկ» սոցիոլոգիական և քաղաքագիտական նախաձեռնությունների հասարակական կազմակերպությունը (Երևան), Հայաստանի ազգային արխիվը, Երևանի Պետական Համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, «Կաճառ» գիտական կենտրոնը (Արցախ), «Օրբելի» վերլուծական հետազոտությունների կենտրոնը (Երևան), «Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ընկերակցություն» (Ռուսաստանի Դաշնություն), Շուշիի տեխնոլոգիական համալսարանը:

Գիտաժողովի նպատակն էր վերհանել հայոց մշակութային կենտրոններից Շուշիում 1920թ.-ին թուրքերի կողմից իրականացված հայ բնակչության

ցեղասպանության դրդապատճառները, բուն ընթացքն ու հետևանքները՝ ևս մեկ անգամ բարձրաձայնելու Ադրբեջանի կազմակերպած ոճրագործության մասին, միջազգային հանրության ուշադրությունը սևեռելու հիմնահարցի վրա և իրավասու մարմիններին ներկայացնելու սահմանված ընթացակարգով համապատասխան միջազգային ատյաններ դիմելու, Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան հիմնախնդրով զբաղվող ուրջ 50 մասնագետներ **Հայաստանի Հանրապետությունից, Արցախի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Ֆրանսիայից, Անգլիայից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Լիբանանից:**

Գիտաժողովի կազմկոմիտեում ընդգրկված էին Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Արամ Սիմոնյանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի խորհրդական Մելանյա Բալայանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայոց հարցի և Հայոց ցեղասպանության բաժնի վարիչ Արմեն Մարուքյանը, Արցախի գիտական կենտրոնի գիտաշխատող Ստեփան Դադայանը, Սոցիոլոգիական և քաղաքագիտական նախաձեռնությունների «Խաչմերուկ» հասարակական կազմակերպության (Երևան) նախագահ Վահան Բաբախանյանը, Արցախի պետական համալսարանի պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, «Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հումանիտար ամբիոնի վարիչ Միեր Հարությունյանը:

Գիտաժողովի շրջանակում տեղի ունեցավ **«Շուշին պատմական լուսանկարներում և արխիվային փաստաթղթերում»** խորագրով ցուցահանդեսը, որը կազմակերպել էր **Հայաստանի ազգային արխիվը:**

Գիտաժողովը բացեց Արցախի Հանրապետության Կրթության, գիտության և մշակույթի նախարարի խորհրդական Մելանյա Բալայանը՝ ներկայացնելով միջոցառման նպատակներն ու խնդիրները, իսկ Արցախի Հանրապետության նախագահի մամուլի խոսնակն ընթերցեց նախագահ Արայիկ Հարությունյանի ուղերձը՝ ուղղված գիտաժողովի մասնակիցներին ու կազմակերպիչներին:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի ուղերձը ներկայացրեց պատմության ինստիտուտի հայկական գաղթօջախների և Սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը:

Ողջույնի ելույթներով հանդես եկան ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարար Լուսինե Ղարախանյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, իսկ օրհնության խոսքով՝ Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը:

Գիտաժողովը բաղկացած էր լիագումար նիստից, որը նախագահում էր Աշոտ Մելքոնյանը: Լիագումար զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ

Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Արամ Սիմոնյանը՝ **«Շուշիի ավերումը. պատմություն և դասեր»,** Արցախի Պետական Համալսարանի գիտության և միջազգային համագործակցության հարցերով պրոռեկտոր, պ.գ.դ., պրոֆեսոր Վալերի Ավանեսյանը՝ **«Միջազգային հարաբերությունները 1918-1920թթ. և հայերի ողբերգությունը Շուշի քաղաքում. դասերը և հետևանքները»,** ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փ. գ. դ., պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը՝ **«Ադրբեջան. հիվանդության պատմություն» (ցեղասպանական քաղաքական վարքի ձևավորումը),** պ. գ. դ., պրոֆեսոր (ԱրՊՀ) Վահրամ Բալայանը՝ **«Ժողովրդագրական գործընթացները Շուշիում 19-րդ դարից մինչև մեր օրերը»,** Վ. Բ. Արծրունու անվան Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, IMEMO RAS-ի ավագ գիտաշխատող (Ռուսաստան) Վիկտոր Նադեին-Ռաևսկին՝ **«Հայոց ցեղասպանությունը Շուշիում և ժամանակակից աշխարհաքաղաքականությունը»,** Հայաստանի հետ բարեկամության և համագործակցության ռուսաստանյան միություն, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, ՌԲԳԱ ակադեմիկոս, Երևանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պատվավոր դոկտոր, Բորիս Պոլտավսկու անվան գրական մրցանակի դափնեկիր, Հայաստանի գրողների միության պատվավոր անդամ Վիկտոր Կրիվոպուսկովը՝ **«Լեռնային Ղարաբաղի հայերի ցեղասպանության, կոտորածների, ջարդերի զանգվածային փաստերի և Ադրբեջանի Հանրապետությունում ահաբեկչության և հայատյացության ժամանակակից քաղաքականության ակունքները. պատմասոցիոլոգիական տեսանկյուն»** զեկուցումներով:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին վեց մասնախմբերում՝ թեմատիկ հետևյալ ուղղություններով՝ **«Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած Շուշիի հայ բնակչության ցեղասպանությունը. պատճառները, նպատակները, փուլերը ու հետևանքները», «Արցախի 1918-1920թթ. պատմական իրադարձությունների նենգափոխումներն արդբեջանական պատմագրության կողմից», «Շուշիի հայկական ժառանգության նկատմամբ Ադրբեջանի իրագործած մշակութային եղեռնի քաղաքականությունը», «Հայերի ցեղասպանությունն Ադրբեջանում՝ որպես պանթուրքիզմի բաղկացուցիչ մաս», «Շուշիի հայերի կոտորածների թեման փաստաթղթերում, գրական ստեղծագործություններում և պարբերական մամուլում», «Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հայերի ցեղասպանության հանցագործության միջազգային դատապարտման և կանխարգելման գործնական միջոցները»:** Մասնախմբերը նախագահեցին Արմեն Մարուքյանը, Միեր Հարությունյանը, Ամատունի Վիրաբյանը, Գևորգ Ստեփանյանը, Աննա Ասատրյանը, Վրեժ Հարությունյանը, Էդիկ Մինասյանը, Մարիամ Ավագյանը, Թեհմինա Մարությանը, Մելանյա Բալայանը, Վահան Բաբախանյանը և Ալեքսանդր Մանասյանը:

Յուրաքանչյուր մասնախմբի զեկուցումների ավարտին տեղի ունեցավ քննարկում համապատասխան թեմատիկ հարցադրումների շուրջ:

Այսպիսով՝ Շուշիի 1920թ.-ի զարհուրելի կոտորածը ադրբեջանական իշխանությունների՝ Արցախը նվաճելու և հպատակեցնելու՝ երկու տարի տևած փորձերի գագաթնակետը դարձավ: Հարավային Կովկաս Թուրքիայի ներխուժման արդյունքում ձևավորված Ադրբեջանի՝ Արցախի նկատմամբ անզուսպ և ոչնչով չհիմնավորված

տարածքային հավակնությունները սկիզբ դրեցին ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությանը՝ ժամանակակից ընկալմամբ: Ադրբեջանական իշխանությունները փորձեցին թուրքական զորքերի ուղղակի աջակցությամբ հասնել իրենց նպատակին: Հետագայում թուրք սպաներն ու էմիսարները շարունակեցին օժանդակություն ցուցաբերել ադրբեջանական ռազմական կազմավորումներին, այդ թվում՝ 1920 թ. Շուշիի կոտորածների կազմակերպման հարցում՝ փորձելով շարունակել հայերի ցեղասպանությունն արդեն Արևելյան Հայաստանում:

Հարավային Կովկասի հանրապետությունների խորհրդայնացմանը հաջորդած Ադրբեջանին Արցախի բռնակցմամբ խնդիրը չլուծվեց, քանի որ Արցախի հայ բնակչության հանդեպ ադրբեջանական իշխանությունների քաղաքակա-նությունը փոխվել էր միայն ձևով, բայց ոչ բովանդակությամբ: 1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբին Խորհրդային Միության փլուզման գործընթացի սկիզբը կրկին արդիական դարձրեց Արցախի հայ բնակչության ֆիզիկական անվտանգության խնդիրը: Ի պատասխան Արցախի ժողովրդի՝ Հայաստանի հետ վերամիավորման խաղաղ պահանջներին՝ Ադրբեջանում թափ առավ հայերի զանգվածային սպանությունների և ջարդերի ալիքը:

1988-1990թթ. հայկական ջարդերը 1920թ.-ի Շուշիի կոտորածների շարունակությունը դարձան և ակնառու կերպով ցույց տվեցին, որ անգամ 70 տարի անց չէին փոխվել ադրբեջանական իշխանությունների ո՛չ նպատակները և ո՛չ էլ մեթոդները: Միայն շնորհիվ Արցախի ժողովրդի ինքնակազմակերպման, որ ստեղծել էր արդյունավետ գործող պետություն՝ բոլոր անհրաժեշտ ինստիտուտներով, ներառյալ՝ մարտունակ բանակը, ինչպես նաև համայն հայության աջակցության՝ հաջողվեց ետ մղել 1991-1994 թթ.-ի Ադրբեջանի զինված ագրեսիան և թույլ չտալ Արցախում Շուշիի սցենարի կրկնությունը՝ սակայն արդեն ավելի մեծ մասշտաբներով: Այսօր Արցախի իշխանություններն ու ժողովուրդը գործադրում են բոլոր ջանքերը Շուշիի վերածննդի և մասնավորապես՝ ադրբեջանական իշխանությունների կողմից ոչնչացված քաղաքի մշակութային ժառանգության վերականգնման համար:

Միջազգային առցանց գիտաժողովի արդյունքներն ամփոփվեցին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հայերի ցեղասպանության հանցագործության միջազգային դատապարտման և կանխարգելման գործնական միջոցներ ձեռնարկելու հարցերի շուրջ օրախնդիր քննարկումով, ինչի արդյունքում ընդունվեց **գիտաժողովի մասնակիցների հայտարարությունը.**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական կտումների քաղաքականությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններում առայսօր միջազգայնորեն չի դատապարտվել, իսկ արյան ու ավերածությունների միջոցով ստեղծված այդ պետությունը պատասխանատվության չի ենթարկվել: Անպատժելիության զգացումը Ադրբեջանի ղեկավարության ոճրագործ ձեռքերին ապատություն է տվել նորից նախճիրներ նյութելու բնիկ ժողովուրդների դեմ, բարբարոսաբար ոչնչացնելու նրանց ստեղծած քաղաքակրթային արժեքները:

Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կարճատև գոյությունն անհամեմատելիորեն հարուստ է պատերազմների սանձազերծումով, բռնություններով, ավազակային հարձակումներով ու կողոպուտներով, էթնիկական զտումներով և բնիկներին պատկանող պատմաճարտարապետական կոթողների կանգվածային ոչնչացումով: Թուրքական սվինների օգնությամբ ստեղծված այդ խամաճիկային պետությունն ինքնահռչակման օրից՝ 1918 թ. մայիսի 27-ից ի վեր Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններում իրականացնում է պետական ահաբեկչության քաղաքականություն, դառնալով ցեղասպանության թուրքական քաղաքականության կույր գործիքը: Այդ քաղաքականության սահմռկեցուցիչ դրսևորումները Այսրկովկասի ողջ տարածաշրջանի պատմության մռայլ էջերն են կազմում: Դրանցից հատկանշելի են Բաքվի 1918 թ. և Շուշիի 1920 թ. եղեռնագործությունները: Իր պատմական հայրենիքից հայ ազգաբնակչության բռնի տեղահանության քաղաքականության շուրջ 70-ամյա անպատիժ գործադրումն այսօր հայրենազրկել է Ադրբեջանում հնուց ի վեր ապրող կես միլիոնից ավելի հայերի, մարդկային ու մշակութային վիթխարի և անդառնալի կորուստների պատճառ դարձել: Բայց այդ ամենին քաղաքական գնահատական չտալը, չդատապարտելը և հանցագործ Ադրբեջանին պատասխանատվության չենթարկելը հանգեցրել են նրան, որ այդ պետությունն այսօր դարձել է տարածաշրջանի ամենաագրեսիվ, սպառազինությունների մրցավազքով և նոր պատերազմ սանձազերծելու մոլուցքով տառապող մի անկանխատեսելի ու վտանգավոր կազմավորում, պատերազմի մշտական օջախ, որը սպառնում է հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգությանը, միջազգային կառույցների տնտեսական, քաղաքական և տարածաշրջանային այլ ծրագրերի իրականացմանը: Այդ սպառնալիքը հատկապես ակնհայտ է հայկական կողմի համար, քանզի տասնամյակների փորձը վերջինիս օգնում է ավելի լավ ճանաչելու եկվոր հարևանների խարդախությունները, կանխատեսելու նրանցից եկող վտանգը: Միաժամանակ, դա Արցախի հայ ազգաբնակչությանն իրավունք է տալիս դիմելու կինված ինքնապաշտպանության, ինչպես արդեն դա արել է XX դարի 90-ականների սկզբներին և 2016 թ. ապրիլին Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու ժամանակ կամ էլ կանխարգելիչ հակահարված հասցնելու սահմանագծում հակառակորդի դիպուկահարների ու դիվերսիոն-հետախուզական խմբերի չդադարող սադրանքների ու ոտնձգությունների կսպման նպատակով: Իսկ համաշխարհային ուժային կենտրոնները, կաշկանդված իրենց հակասական շահերից և կուրացած ադրբեջանական քարոզչամեքենայի կեղծիքների խաբուսիկ ցոլքից, դեռևս հապաղում են բռնել պանթուրքական կառանցանքներով տառապող ոճրագործի ձեռքը, դատապարտել պատերազմի սպառնալիքներով ու հրադադարի ռեժիմը խախտելով, վանական սադրանքներով իրավիճակը ապակայունացնելու և խաղաղարար գործընթացը տապալելու Ադրբեջանի քաղաքականությունը: Առաջընթացի հասնելու համար հայկական կողմի անելիքները ևս շատ են, մանավանդ, որ ճշմարտությունը տեղ հասցնելու համար պահանջվում է երկարատև ու անդադար պայքար: Այս տեսակետից կարելի է հատկանշել նաև հասարակության ակտիվության գործոնը: Ցեղասպանություն վերապրած մեր հայրենակիցների սերունդների նպատակը ոչ միայն Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականության դատապարտումն է, այլև միջազգային հանրությունից, նախ և առաջ, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության

կարգավորման գործընթացում ներգրավված պետություններից նույնն ակնկալելն ու պահանջելն է:

Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կողմից ծրագրված ու կազմակերպված Բաքու և Շուշի քաղաքների հայ բնակչության ջարդերը և Արցախի երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի հրկիզումը էթնիկական զտման ադրբեջանական քաղաքականության հերթական դրսևորումներն էին, ոչ միայն արմենոցիդի թուրքական քաղաքականության շարունակությունը, այլ նաև ոտնձգություն ամբողջ մարդկության ու ժողովրդավարության դեմ: Երկու օր շարունակված միջազգային առցանց գիտաժողովի մասնակիցները դատապարտում են Ադրբեջանի ոճրագործությունները և վստահություն են հայտնում, որ միջազգային հանրության կողմից այդ երկրի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների շարունակվող քաղաքականության դատապարտումը կամ դրան համարժեք քաղաքական, իրավական գնահատական տալը կարող են դառնալ նման հակամարդկային դրսևորումների կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը:

Ներկայիս Ադրբեջանը, լինելով այսպես կոչված Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդը, և օգտվելով անպատժելիությունից, որդեգրել է իր նախորդի ոճրագործ քաղաքականությունը: Դրա վկայությունն են հանդիսանում 1987-91 թվականների Ադրբեջանի հայ ազգաբնակչության ջարդերը և բռնատեղահանությունները, ագրեսիայի նախաձեռնումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, իսկ ներկայում սահմաններ փակելով, հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտելով, խաղաղարար գործընթացին խոչընդոտելով պատերազմի ու սպառազինությունների մրցավազքի մշտական հրահրումը:

Թուրքիայի ու Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությունը վերապրածների սերունդները դատապարտում և անընդունելի են համարում քաղաքական հիմնախնդիրները բիրտ ուժի միջոցով լուծելու՝ այդ երկու կազմավորումների քաղաքական գիծը: Թեև մեր ժողովուրդը միշտ էլ կարծել է, թե միայն քաղաքակիրթ ճանապարհով կարելի է լուծել պետությունների միջև վիճահարույց հիմնախնդիրները, սակայն պատմությունը սովորեցնում է, որ ծառացած խնդիրները պետք է լուծել՝ ապավինելով սեփական ուժերին, մեր ազգի բազկի ու մտքի հավաքական զորությանը: Ուստի, Շուշիի հայերի հանդեպ եղեռնագործության 100-րդ և Արևմտյան Հայաստանի ու Թուրքայի տարածքում հայ ազգաբնակչության ցեղասպանության 105-րդ տարելիցներին հայ ժողովուրդը միջազգային հանրությունից ընդամենն ակնկալում է դատապարտել Ադրբեջանի՝ տասնամյակներ շարունակվող հակահայկական գործողությունները ու բոլոր հնարավոր միջոցներով ու ազդեցության լծակներով այդ երկրի ավտորիտար իշխանություններին հետ պահել Այսրկովկասի անվտանգությանը մշտապես սպառնալու անմիտ մարտավարությունից: Կամ գոնե համակողմանիորեն աջակցել Ադրբեջանի ագրեսիվությունը զսպելու կարևոր առաքելությունն արդեն գրեթե երեք տասնամյակ իրականացնող Լեռնային (Արցախի) Հանրապետությանը և նրա փառապանծ Պաշտպանության բանակին:

Անթույլատրելի է աչք փակել նաև ամենաբարձր մակարդակով Նախիջևանում իրականացվող հայկական մշակութային արժեքների յուրացման և ոչնչացման վրա: Երբ ծայրահեղական ահաբեկիչները Մերձավոր Արևելքում գազանաբար ոչնչացնում են մշակութային համամարդկային արժեքները, իսկ պատմական Կոստանդնապոլսում

մկկիթի է վերածվում Սուրբ Սոֆիայի տաճատը, առավել քան կգացվում է Նախիջևանում ադրբեջանցիների կողմից հայկական բացառիկ խաչքարերի ջարդուփշուր անելու նախադեպը և վանդալիզմի այլ գործողությունները դատապարտելու, ինչպես նաև Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Նախիջևանյան թեման շարունակությունն է Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական զտումների քաղաքականության մերկացման և Արցախի հետ սերտորեն առնչվում է ինչպես Ադրբեջանի հետ հակամարտության համատեքստում, այնպես էլ այն առումով, որ հենց Նախիջևանի ողբերգական ճակատագիրը մղեց Արցախի հայ ազգաբնակչությանը պարզելու պայքարի դրոշը՝ Ադրբեջանի ոճրագործ քաղաքականությունից ինքնապաշտպանվելու նպատակով: 1920 թ. մարտյան ողբերգությանը զոհ գնացին նաև ժամանակին Ագուլիսից Շուշի տեղափոխված մեր հայրենակիցները, ուստի Արցախի ոստանի ու Նախիջևանի կապը ոչ միայն պատմականորեն է, այլ նաև Ադրբեջանի նույն ոճրագործ քաղաքականությանը ենթարկվելու դժբախտությունն ունենալու տեսանկյունից:

Շուշիի մարտյան ողբերգության 100-րդ տարելիցին նվիրված միջազգային առցանց գիտաժողովում ներկայացված զեկուցումները նպատակ ունեն ևս մեկ անգամ բարձրաձայնել Արցախի երբեմնի ոստանում Ադրբեջանի կազմակերպած հայերի կոտորածների մասին, միջազգային հանրության ուշադրությունը սևեռել հիմնահարցի վրա և իրավասու մարմիններին ներկայացնել սահմանված ընթացակարգով համապատասխան միջազգային ատյաններ դիմելու և Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Շուշիում Ադրբեջանի կողմից կազմակերպված ոճրագործությունները հայ ազգաբնակչության նկատմամբ ցեղասպանության տասնամյակներ շարունակվող քաղաքականության հերթական դրսևորումն էին և բացահայտում են Ադրբեջանի ահաբեկչական, ագրեսիվ ու անմարդկային բնույթը:

Մեր օրերում, երբ տեղաբնիկների ցեղասպանության միջոցով ձևավորված Ադրբեջանի ղեկավարները բարձր ամբիոններից ճամարտակում են ժողովրդավարական արժեքների մասին, պետականորեն իրենց իսկ կազմակերպած ու իրագործած ոճրագործությունների, այդ թվում նաև ս. թ. հուլիսի 12-ին Տավուշի շրջանում ինքնիշխան Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը խախտելու նպատակով սադրիչ նախահարձակման համար ցինիկորեն մեղադրում դրանց զոհ գնացած անմեղ հայերին, ավելի քան հրատապ է, մանավանդ՝ ներկայում լայն թափ ստացած տեղեկատվական պատերազմի պայմաններում, անցյալի ողբերգական իրադարձությունների վերաիմաստավորումը, դրանց համարժեք գնահատական տալը և, դրանով իսկ Ադրբեջանին դիմակազերծ անելը»: